ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 37

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով *որոշում եմ.*

1.2020թվականի օգոստոսի 07-ին ժամը 11:00 հրավիրել Ջրառատ համայնքի ավագանու արտահերթ նիստ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 թ.
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 38

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրառատ համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Ջրառատ համայնքի.

1/ խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2/ Աղետների ռիսկի կառավարման խորհրդի աշխատակարգը և գործառույթները՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջրառատ համայնքի ղեկավարի 2018թվականի հունիսի 06-ի «Ջրառատ համայնքում աղետների ռիսկի կառավարման համակարգ ստեղծելու մասին» թիվ 16-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ. ______________
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 39

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրառատ համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ *որոշում եմ.*

1.Հաստատել 2020 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:

2.Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2020թվականի հունվարի 16--ի «Ջրառատ համայնքում աղետների առիսկի կառավարման պլանը հաստատելու մասին» թիվ 05 որոշումը:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20__ թ. ______
գ.Ջրառատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (094) 382633, jrarat.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 40

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ջրառատհամայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի N 28-Ն որոշումն՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1.Ջրառատ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի «Ջրառատ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1.1.1.51 ծրագրի 4232հոդվածի «100000» թիվը փոխարինել «95000» թվով
1.1.1.51 ծրագրի 4214 հոդվածի «250000» թիվը փոխարինել «230000» թվով

1.1.1.51 ծրագրի 4267 հոդվածի «50000» թիվը փոխարինել «0» թվով

1.1.1.51 ծրագրի 4252 հոդվածի «50000» թիվը փոխարինել «125000» թվով

1.3.3.51 ծրագրի 4232 հոդվածի «272000» թիվը փոխարինել «242000» թվով

10.07.01.51 ծրագրի 4729 հոդվածի «0» թիվը փոխարինել «30000» թվով

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ.
գ.Ջրառատ